/ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ/
ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

- **Գործուղված անձինք**

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ՝ Ս. Մնացականյան

- **Երկիր/քաղաք/ ժամկետ**

Վրաստան / Թբիլիսի / 27.09 -30.09.2022թ.

- **Նպատակը**

Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից կազմակերպված «Տվյալների աղբյուրները և համակարգումը վիճակագրական համակարգերում» խորագրով Եվրոպական հարևանության քաղաքականության Արևելյան և Կենտրոնական Ասիայի երկրների համար Բարձր մակարդակի սեմինար

- **Քննարկված թեմաները**

Սեմինարին քննարկվել են հետևյալ թեմաները.

2022թ. սեպտեմբերի 28-ին

- Ելույթներ ԵՄ-ի, Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի (EFTA), ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (UNECE) և Վրաստանի Ազգային վիճակագրական գրասենյակի (Geostat) կողմից
- Ներածություն և վերջին զարգացումները Եվրոստատում, EFTA-ում և UNECE-ում
- ԵՀՔ-Արևելյան և Կենտրոնական Ասիայի երկրներում վերջին զարգացումները
- ✓ Հաշվետվություններ Ազգային վիճակագրական գրասենյակների կողմից իրենց ազգային վիճակագրական համակարգերի ամենակարևոր վերջին զարգացումների վերաբերյալ
- ✓ Առաջիկա 2-3 տարում աջակցություն պահանջող առաջնահերթություններ
- Վիճակագրական գնահատումներ (Գլոբալ գնահատումներ/ փորձագիտական գնահատումներ/ ոլորտային գնահատումներ)

2022թ. սեպտեմբերի 29-ին

Վարչական տվյալներ և տվյալների նոր աղբյուրներ

- Վարչական տվյալներ
- ✓ Իրավական և անձնական պաշտպանության խնդիրներ
- ✓ Տեխնիկական և կառուցվածքային մատչելիության խնդիրներ
- ✓ Պաշտոնական վիճակագրության այլ արտադրողների համակարգում
- Մասնավոր պահվող տվյալներ
- ✓ Իրավական և անձնական պաշտպանության խնդիրներ

- ✓ Տեխնիկական և կառուցվածքային մատչելիության խնդիրներ
- ✓ Տվյալների սեփականատերերի, վիճակագրական գրասենյակների և այլ պետական մարմինների միջև համակարգում
- Պաշտոնական վիճակագրության տվյալների նոր աղբյուրներ
- ✓ Աշխարհատարածական և բջջային հեռախոսի տվյալներ
- ✓ Մեծ տվյալներ
- ✓ Վեբ սքրապինգ
- ✓ Իրերի ինտերնետ:

2022թ. սեպտեմբերի 30-ին բարձր մակարդակի սեմինարի շրջանակում տեղի է ունցել «Գործընկեր երկրների պատկերացումը պաշտոնական վիճակագրության տվյալների նոր աղբյուրների վերաբերյալ» թեմայով նիստ նվիրված պաշտոնական վիճակագրության համար տվյալների նոր աղբյուրներին և տվյալների հավաքագրման այլընտրանքային մեթոդներին վերաբերող հարցերին, ինչպես նաև ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման խնդիրներին, ինչպիսիք են՝ Մեծ տվյալները, սկանավորված տվյալները, վեբ սքրապինգը, բջջային հեռախոսի տվյալները և այլն: Նիստին երկրները և փորձագետները ներկայացրեցին շնորհանդեսներ:

2022թ. սեպտեմբերի 28-ին «ԵՀՔ-Արևելյան և Կենտրոնական Ասիայի երկրներում վերջին զարգացումները» խորագրով նիստին ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ՝ Ա. Սաֆյանը ներկայացրեց հաշվետվություն Արմստատի ամենակարևոր վերջին զարգացումների վերաբերյալ, ինչպես նաև տեղեկատվություն առաջիկա 2-3 տարում աջակցություն պահանջող առաջնահերթությունների և ս.թ. հունիսի 13-16-ը Եվրոստատի փորձագետների կողմից իրականացված Շրջակա միջավայրի վիճակագրության ոլորտային գնահատման վերաբերյալ: Գնահատման նպատակն էր աջակցել Արմստատին շրջակա միջավայրի վիճակագրությունը համապատասխանեցնել Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգիրքին և եվրոպական չափանիշներին, գնահատել առկա իրավիճակը՝ բարձրորակ վիճակագրություն արտադրելու և բարելավմանն ուղղված առաջարկություններ և գործողություններ առաջարկելու համար:

2022թ. սեպտեմբերի 30-ին «Գործընկեր երկրների պատկերացումը պաշտոնական վիճակագրության տվյալների նոր աղբյուրների վերաբերյալ» թեմայով նիստին Ս. Մնացականյանը ներկայացրեց «Պաշտոնական վիճակագրության համար տվյալների նոր աղբյուրներ՝ Հայաստանի փորձը» խորագրով շնորհանդես:

- **Արդյունքները**

Մասնակցությունը սեմինարին հնարավորություն ընձեռեց ազգային վիճակագրական ծառայությունների ներկայացուցիչներին՝ ծանոթանալու վերջին զագացումներին Եվրոպական Վիճակագրական Համակարգում, քննարկելու ազգային վիճակագրական համակարգերի համակարգման գործիքները, վարչական տվյալների և տվյալների նոր աղբյուրների օգտագործման հետ կապված մարտահրավերները, տվյալների մատչելիության և վիճակագրական գաղտնիության խնդիրները, կիսելու իրենց խնդիրներն ու փորձերը, ինչպես նաև քննարկելու

խնդիրները, կիսելու իրենց խնդիրներն ու փորձերը, ինչպես նաև քննարկելու գործողություններն ուղղված ազգային վիճակագրական համակարգերի հետագա կատարելագործմանը:

- **Նշումներ**

Սեմինարի ընթացքում տեղի ունեցան քննարկումներ Եվրոստատի, Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի (EFTA) և ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (UNECE) ներկայացուցիչների հետ հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ, մասնավորապես Ուսումնասիրությունների և մշակումների վիճակագրության կատարելագործման և Վիճակագրական Կազմակերպությունների համար Ընդհանուր Գործունեության Մոդելի (GAMSO) ներդրման վերաբերյալ:

Այցելության ծախսերը ֆինանսավորվել էին Եվրոստատի կողմից:

ՀՀ վիճակագրական կոմիտեի
նախագահ

Ս. Մնացականյան